0512
5.I. 4

Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՅՈՒՆՎԱՐ 15 1893 ԹԻՒ 1

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան



ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

(1830—1892)

ՀԱՅՔ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ՄԱՀԱԳՈՅԺ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ

Տփղիսէն առ խմբագրութիւն 'Հայքի' ուղղեալ հեռագիր մի, զոր ստացանք Յունվար 2ին, կը գուժէ «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունւոյ մահն։ Դեկտ. 27ին յուղարկաւորութեան հանդէսն կատարուած է։

Այս բօթ ճշմարիտ, խորին վշտով համակեց զմեզ։

Հայ մտքի մեծ մշակն ոչ ևս է։ Քսան և վեց տարի տաժանաքիրտն աշխատութեամբ երկրագործելէ և ցանելէ յետոյ կը հանգչի նա։

«Հայքի»ընթերցողք գիտեն այն բարձր սքանչանքն զոր հանդէսս կը տածէր առ «Մշակի» խմբագիրն։

Հայութեան ծոցէն մեծ ոյժ մի պակսեցաւ նորա անակնկալ մահուամբ։

Ի՛նչ տարակոյս թէ այս կորուստ ամենախորին վշտով կը համակէ բովանդակ Հայ Ազգն։

Աւա՜ղ...

«Հայք» 1893 թուականն սկսելու առեն հրապարակաւ շնորհակալ կը լինի այն ամենուն որոց հայրենասիրական եռանդեան կը պարտի յերրորդ տարեշրջան թևակոխելու բաղդն։

Մշակեալ հայրենասիրաց բազմութեան ձայնն որ ամեն կողմէ, մօտէն ու հեռուէն հնչեց ի քաջալեր «Հայք»ի, չեղաւ անպտուղ. հարիւրաւոր ձեռքեր կարկառեցան փոքր ի շատէ նպաստելու հանդիսիս հրատարակութեան։ Մեք վստահ եմք թէ անոնք որք մղեցին զմեզ նոր տարի մի ըսկսելու, պիտի շարունակեն իրենց անձնուէր հոգածութիւն ևզմեզ կարող պիտի ընեն ի գլուխ հանելու այս ձեռնարկ։

Քաջալերիչ և ուրախարար բան է որ ՀԱՅՔ կրցաւ ո՛ևէ կերպիւ ապրիլ վերջապէս. բայց աւելի քաջալերիչ և ուրախարար կը լինի եթէ հանդէսս կարենայ բաժանորդաց մեծ թիւ մ'ունենալ այս տարի այլ ևս նուիրատուութեան կարօտ չլինելու համար։

Մեր բարեկամք անշուշտ զնոյն կը խորհին և նոցա ջանից արդիւնքներն մեծ մասամբ կը ժամանեն մեզ մինչեւ ամսոյս վերջերն։

Կը յուսամք նաև թէ մեր բաժանորդք և մեր բարեկամք մեզ հետ համաձայն կը լինին բաժանորդ ըսելով վճարող և կանխիկ վճարողներն հասկնալու։

Ալ տարակոյս չունիմք թէ հայրենասէրք կարող են բաժանորդաց բաղձալի թիւն գոյացունել եթէ իրենց գերագոյն ճիգ թափեցին ու կը թափեն տարուոյս ճիշդ այս սկզբնաւորութեանն, որով թէ նոքա և թէ մեք բոլոր տարին ձանձրոյթ ու նեղութիւն կրելէ կ'ազատիմք, և մեր ոյժ և ուշ կը նուիրեմք ոչ թէ տեւելու խնդրոյն, այլ մեր աւելի մեծ և դժուար խնդիրն լուծելու։

Տարիներն ի՞նչ շուտ կ'անցնին։

Հայրե՛նասէրներ, շուտ շարժինք եւ մեք։

Կը խնդրեմք որ մրնի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Branch E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՀԱՅՈՑ ՀՈՒՐՆ

Որպէս զի չոգեկառքն երթայ ժամանէ ի հասկէան, պէտք է գոնուի ճիշդ գծին վերայ, առաջնորդուի հմուտ կառավարէ, և եւս՝ ունենայ իւր մէջ շարժիչ զօրութիւն, ՀՈՒՐ:

Հայ ազգն ալ իւր խոր անկումէն մինչև ի շարժս հզօր ազգաց բարձրանալու համար՝ հարկ է որ ունենայ ահագին հուր որ շարժէ, և հմուտ ղեկավար որ շարժմանն տայ ճիշդ ուղղութիւն դէպ ի վեհ նպատակն:

Թէ մեր ղեկավարողք ո՞րքան ձեռնհաս են, զայն չունիմք ասել, բայց գոհութեամբ կը տեսնեմք այն հայկական հուր որ մերթ ընդ մերթ կը փայլիլի գըրեթէ ամեն քաղաքի մէջ ի Տաճկահայս, և երբեմն կը հասնի անակնկալելի բարձրութեան՝ ինչպէս ի Զէյթուն, ի Կարին, ի Կ. Պոլիս, յԱրաբկեր և ի Սասուն:

Եւ մեք, արտասահմանի Հայերս չե՞մք միթէ Հայ, և չե՞մք կարող արձակել հայկական հուր, եռալ ազգային տենչանօք:

Պէտք չէ որ գոհ լինիմք կիսկատար բորբոքմամբ մխալով. զի մխալն ալ թէև կը սպառէ վառելիքն, լոյս չտար և ոչ ջերմութիւն բաւական: Փոքրիկ և կիսկատար զոհողութիւններն վատնումն է, մինչ միևնոյն վառարանին մէջ նետուած վառելիքներն կրնան փառաւոր բոց արձակել և տեւական կրակ հայթայթել շարժման համար:

Ազգն տյնպիսի մեծ գործ ունի առջեւն որ զայն ի գլուխ տանելու համար անսպառ, անհուն եռանդով պէտք է գործէ: Ինչ որ անբաւական է՝ այն կորուստ է, վատնում է, որքան և շատ լինի: Եթէ 100 քաշ ծանրութիւն ունեցող քար մի վեր վերցնելու համար 99 քաշի ոյժ գործածեմք, քարն իւր տեղ կը մընայ:

Ազգային մեծ գործեր կատարող ժողովուրդներ այնպիսի եռանդով խանդավառեալ կը լինին որ տալու, զոհելու, աշխատելու մէջ չափ ու սահման կը մոռնան: 100 քաշն վերցնելու համար յաճախ 200 քաշի ուժ թափեն:

Այդ ի՜նչ խենթութիւն է, պիտի ըսուի: Բայց պատմութիւնն կը ցուցնէ թէ երբէք ազգ մի կանգնած չէ առանց այդպիսի փրկաւէտ խենթութեան: Մեր ազգին համար վտանգ չկայ թէև՝ որ աւելորդ ոյժ թափէ, զի իւր բովանդակ ոյժն հազիւ կը գօրէ ահագին արգելքներն ի բաց բառնալու:

Մեք այդ կարգի խենթութեան նշաններ երբեմն տեսնելով մեր ազգին մէջ՝ կը մխիթարուիմք: Գործաւորներ կան, որ իրենք զիրենք կարեւորէն զրկելով՝ ազգին համար կուտան անհաշիւ առատութեամբ: Երիտասարդներ կան որք կը պաշտեն ճշմարիտ գործիչներն: Գործիչներ կան որք իրենց ամեն բանն ազգային Դատին ուխտիւ նուիրած են — զրկում, քնհատութիւն, յոգնութիւն, զրպարտութիւն, ծաղր և հեգնութիւն յանձն են առած:

Հուր մ'է ինկած ազգին մէջ, ազգին զաւակաց ոմանց սրտին մէջ, և կը լափէ, կը վառէ նոցա ամեն բանն ի սէր հայրենեաց:

Եւ երբ այդ հրով բորբոքեալ երկու կամ աւելի սրտեր զիրար ճանաչեն մօտէն լինի թէ հեռուէն, իրարու կը փարին— կը միանան, իրարու կը խառնուին:

Ո՞չ ապաքէն բարձր աստիճանի ջերմութիւն է հարկաւոր մարմիններն հալելով իրարու հետ միացնելու, մի մարմին գործելու համար:

Ճիշդ այդ հայրենասիրական հուրն է որ այժմ հրաշիւք իմն մեր ազգի մէջ միաբանութիւն, համերաշխութիւն կը գոյացունէ՝ հալելով, ձուլելով, միացունելով սրտերն:

Ճշմարտութիւնն կը միացունէ զմարդիկ, մոլորութիւնն կը բաժնէ՝ կը քայքայէ մարմիններն: Ճշմարիտ հայրենասիրութիւնն գերազանցապէս բարոյացուցիչ ոյժ մ'է:

Ճշմարիտ հայրենասիրութեան հուրն կը սրբէ խորհուրդներն և կը զօրացունէ բնաւորութիւնն: Հայ ժողովուրդն զգալապէս այլակերպեալ է արդէն այդ հրոյ զօրութեամբ: Այն սակաւ, զգուշաւոր, չափազանց խոհեմ Հայն այսօր կը ցուցնէ կարմրած աչեր և կրակոտ լեզու— և երբեմն կրակող բազուկ իսկ:

Ո՞չ ապաքէն հաւն անգամ կ'առնու հզօրագոյն թռչնոյ մի գոռող երևոյթ երբ մայրական սիրով վառեալ կը յարձակի իւր ձագուց թշնամւոյն վերայ:

Կենդանւոյ մի զօրութեան և ընդունակութեանց վիճակն դատելու համար պէտք է տեսնել զնա երբ սիրով կամ կռուելու ոգւով եռանդեալ է։ Ի՞նչ անարգ և ապիկար երևոյթ ունի մատի մեծութեամբ փոքրատեսակ ձուկ մի, բայց դիտէ՛ զնա իւր թշնամւոյն ներկայութեան. նորա տանային լուղակն կը տարածուի՝ կ'եռապատկի մեծութեամբ, զմայլելի գոյներ կ'առնու, անբացատրուն աչերն կ'ընկըսին փայլատակել, լուղակներն կը տարածուին և կը գունաւորին,— ձուկն բոլորովին կը փոխուի, կը մեծնայ, կը գեղեցկանայ և կը զօրանայ։

Մանդն ալ հաւուն, ձկան, այլ ամեն կենդանեաց պէս է այդ նկատմամբ, և առաւել քան զայլ ամենայն կենդանիներ ընդունակ է զգացմանց ներշնչմամբ փոխուելու։ Զգացմանց մէջ վեհ և հզօր է հայրենասիրական աւիւնն, որ կը մեծցունէ մարդուն հոգին, կը բարձրացունէ խորհուրդներն, կ'ընդլայնէ իւր հետաքրքրութեան և անձնուիրութեան շրջանակներն, մոռցունել կուտայ իւր անձնական շահն, հանգիստն ու փառքն, և ամեն զոհողութեան տրամադիր կ'ընէ զնա։

Ուրիշ շատ ճշմարիտ զգացումներ կան որք կրնան փրկել անհատ մի, բայց լուսամիտ հայրենասիրութեան հուրն է որ կրնայ փրկել ազգ մի, և փրկել՝ սրբելով, միացունելով և զօրացունելով զայն։

Հայե՛ր, ի՛նչ կրօնական կամ իմաստասիրական համոզումներ ալ որ ունենաք, լաւ համոզուեցէք այսմ, թէ անկարելի է Նոր Հայաստան ստեղծել առանց հայրենասիրութեան սուրբ հրոյն։ Եղկ, դաղջ, տաքուկ լինիլ հերիք չէ, պէտք է լինիլ բարկ կրակ, ՀՈՒՐ։

Հուրն էական մէջոց է ստեղծագործութեան և կերպաւորման։ Աչխարհս հալած, ջերմ վիճակի մէջ էր ի սկզբան անդ երբ արարիչն կը կազմաւորէր զայն։

Ազգ մի, ժողովուրդ մի ևս չկրնար նորոգուիլ, վերակազմուիլ, երկիր մի չը-կրնար վերաստեղծուիլ առանց սաստիկ, ղ ջերմութեան։

Տաքցէ՛ք, բորբոքեցէ՛ք, եռացէ՛ք ուրեմն, հայրենասէրներ։

Ցարատևեցէք ձեր երկնաշունչ յիմարութեան մէջ, Հա՛յ երիտասարդներ։

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

Ա.

Ռաֆայէլ Պատկանեանի բարձր տաղանդն պէսպէս ձեւերով արտայայտուած է այլ և այլ ստորագրութեան տակ։ Նա արտադրած է վէպիկներ, երգիծաբանութիւններ և քնարերգական բանաստեղծութիւններ, ստորագրելով Միքայէլ Վայելչեան, Ախտամերկեան, Սիլլիւկ, Գամառ-Քաթիպա։ Կենսագրական մեր տես տեսութիւն ի նկատի ունի մասնաւորապէս զբանաստեղծն, ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ, որպէս յայտնուած է նա իւր «Բանաստեղծութիւնքը» կոչուած՝ 175 երեսներէ բաղկացեալ հատորին մէջ, տպեալ ի Մոսկուա 1881ին։ Պատկերն ևս զոր կուտամք ներկայիս հետ, ընդօրինակումն է նոյն հատորի ճակատում դրուածին, որ կը թուի մեզ նախամեծար՝ իբր այն որ կը պատասխանէ մեծ բանաստեղծին զարգացման և խանդին հզօրագոյն հասակին։

Բ

Ռաֆայէլ Պատկանեան ծնած է ի Նոր-Նախիջեւան, 1830, Նոյ. 20ին։ Նախնական դաստիարակութիւն առաւ նա իւր հօրմէն, որ քահանայ և վարժապետ միանգամայն էր։ Ապա ընթացք աւարտեց Դորպատի համալսարանին մէջ։ 21 տարեկան հասակէն մինչև ցվախճան կենացն, աւելի քան 40 տարի, գրեց նա շարունակ ազգային նիւթերու վերայ։

Պատկանեան թոքախտէ մեռաւ 1892 Սեպտ. 3ին, ի Նոր-Նախիջեւան, որը թողլով ինն զաւակներ, և անմխիթար՝ 4 միլիոն հայ եղբայրներ։

Գ

Ներկայ դարուս մէջ մեր ազգի մէջ երեք դաս բանաստեղծներ եղած են։ Նախ՝ գրաբար գրողներու դասն, ի գլուխ որոց էր Հ. Ա. Կ. Բագրատունի՝ իւր հոյակապ «Հայկ Դիւցազն»ով։ Հայր Ղեւոնդ Ալիշան, Խրիմեան Հայրիկ, Խորէն եպ. Գալֆայեան (Խորխոռունի կամ Նար-Պէյ) և այլ ոչ սակաւք գրեցին մեծ ու փոքր բանաստեղծութիւններ յոյժ գեղեցիկ։

Դոցա յաջորդեց բանաստեղծից երկրորդ դաս մի, յորում նշանաւոր հանդիսացաւ Մկրտիչ Պէշիկթաշլեան: Սոքա գրեցին մերթ գրաբար մերթ աշխարհաբար, բայց միտելով եւ քան զեւ յաշխարհաբար, այլ յայնպիսի աշխարհաբար որ մօտէն կամ հեռուէն կ'արբանեկէր գրաբարին: Առաջին դասուն պատկանողներէն ոմանք եւս սկսան գրել այս լեզուաւ, օրինակ՝ Խորէն եպ. Նար-Պէյ գրեց «Ստուերք Հայկականք»ն:

Երրորդ դասն գլխովին թօթափելով գրաբարի հմայքն, գրեց պարզ աշխարհաբար, գաւառային և երբեմն կոչտ ռամկական լեզուաւ: Այս դասու պարագլուխն եղաւ Գամառ-Քաթիպա:

Գամառ-Քաթիպա ոչ միայն պարագլուխ եղաւ երրորդ դասուն, այլ և մեծագոյն բանաստեղծն հանդիսացաւ Հայ Ազգին, քանզի իւր բանաստեղծութիւնք նոյնքան գեղեցիկ լինելէ զատ՝ եղան շատ աւելի օգտակար, շատ աւելի ընդարձակ շրջանի մէջ շինիչ քան զմիւսներուն: Առաջին դասուն քերթողք խօսեցան գրաբարի հմուտ եղողներուն, երկրորդ դասինքն՝ փոքր ի շատէ ուսումնական եղողներուն, իսկ Գամառ-Քաթիպա երգեց ամենուն—ուսելոյն, ուսանողին և անուսին: Ժողովրդական ահագին զանգուածն խմորելու համար զիջաւ նա իւր գեղեցիկ մտքերն նորա ագեղ և խեղճ լեզուաւ բացատրել. անուս Վանեցւոյն, Մշեցւոյն, Տփղիսեցւոյն դաստիարակն եղաւ, արանց ինչպէս նաև կանանց: Նա յանդիմանեց անձնասէր հարուստն և աղքատատեաց աղան, նշաւակեց ուստ ազգասէրն և կեղծ բարեպաշտն: Փառասիրին առջեւ դրաւ ճշմարիտ մեծութեան գաղափարականն, ընչեղին պարգեց արծաթասիրութեան ունայնութիւնն, զկծեցոյց թեթեւսոլիկ երիտասարդն, հեգնեց օտարամոլ երիտասարդուհին, սոսկացուց նախանձոտ քոյրն և դողացուց բռնաւոր ծնողն: Եւ յաջողեցաւ նա ռամկին հասկանալի լինել, աւելի քան հասկանալի— տխրալի, աքանչելի: Ո՞ր հայ ընտանեաց, ո՞ր ազգային հանդիսի մէջ հնչած չեն նորա երգերն. եղա՞ծ է սիրտ ա՛յնքան թոյլ որ տրոփած չլինի կամ ոգի ա՛յնպէս դանդաղ որ գրգիռ զգացած չլինի ի լուր նորա հրաշունչ բանաստեղծութեանց: Գամառ-Քաթիպայ քը նարին սրտայոյզ հնչիւնն ո՞րու կուրծք ուռեցուցած չէ հայրենասիրական հառաչանօք և ո՞րու արտասուել չէ տուած...

Դ

Թէ Գամառ-Քաթիպա ունէր երեւակայութիւն, թէ կը գրէր նա բանաստեղծութիւններ ուր խոր միտք և զմայլելի ձև լծակից կ'ընթանային—զայն լիովին կը-նայ ապացուցանել «Մայր Արաքսին» կամ անոր կարգէն եղող ուրիշ մէկ բանաստեղծութիւնն— Նորա «Օրօրոցի Երգն», թէեւ քիչ ծանօթ, կը վերաբերի այդ կարգին: Համառօտ է այդ աքանչելի երգ, և կ'արժէ որ դնեմք զայն ընթերցողաց առջեւ:—

Արի՛, իմ սոխակ, թո՛ղ պարտէզ մէրին,
Տաղերով քուն բեր սըղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին շուզէ սիրացու դառնալ:

Եկ, աբեղաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ սըղիս, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է, դու, ձագուկ մի՛ գալ,
Իմ որդին շուզէ աբեղայ դառնալ:

Թո՛ղ դու, տատրակիկ քու ձագն ու բունը,
Վուվույով սըղիս բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ մի՛ գալ,
Իմ որդին շուզէ սըգաւոր դառնալ:

Կաղաչակ՝ ճարպիկ, դող, արծաթասէր,
Շահի գրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի՛ գալ,
Իմ որդին շուզէ սովդագար դառնալ:

Թո՛ղ սրսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Ո՞ւ երգը գուցէ իմ որդին կ'ուզէ..
Բայէն որ եկաւ՝ որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ:

Կ'արժէր որ այս և ուրիշ մի քանի քերթուածոց վերայ ցուցնէինք Գամառ-Քաթիպայ բանաստեղծական աքանչելիքն, բայց կը թողումք զայդ, զի աւելի կարեւոր բան մ'ունիմք ընել— խօսիլ մեծ բանաստեղծին ազգային հաւատոյ կամ դաւանանքի մասին:

Ե

Ի՞նչ էր Գամառ-Քաթիպայ ազգային դաւանանքն:

Նա չէր այն բանաստեղծներէն որք կը գրեն աքանչացնելու համար ընթերցողնե-

ը՝ կամ ցուցնելու իրենց տաղանդն։ Գամառ-Բաթիպա կը տաղաչափէր կրթելու, համոզելու, շարժելու համար դհայ ժողովուրդն։

Ի՞նչ ըսել ուզեց նա հայ ազգին։ Ի՞նչ երգի մէջ, ի՞նչ տողերու մէջ նա կեդրոնացուցած է իւր միտք։

Նա ուշագրաւ քանի մի տողեր դրած է ուսանողի բերանն։—

Հայկ ու Լեւոնին մոռանանք, եղբարք,
Թափ տանք մեզանից փոշին հնութեան,
Վերածնենք մեր մէջ նոր կեանք ու նոր բարք,

Այդ տողերու մէջ է, ըստ «Մշակի», խանասեղծին գաղափարաց ամբողջ խորութիւնն։

«Ահա, կ'ըսէ Մշակ, Պատկանեանի հաւատի դաւանանքը, որն իր մէջ ամենից լաւ է ամփոփում իր խմբի ուղղութեան, գաղափարների ամբողջ խորութիւնը։ Այդ երեք տողերի մէջ է ամփոփվում և յիսուներորդ թւականների այդ հանճարեղ ազգային աշուղի ու նրա ընկերակից խմբակի ամբողջ գործունէութեան նշանակութիւնը, նրա կոչումը, նրա raison d'etre, նրա ամբողջ գոյութիւնը...

«Մոռանանք հին դարերի հայոց ամբողջ պատմութիւնը՝ դարերի ամբողջ ընթացքը՝ Հայկից սկսած մինչև Լեւոնը, թափ տանք մեզանից հնութեան փոշին և նոր քաղաքակիրթ, ժամանակակից կեանք ստեղծենք մեզ համար, աներկիւղ ուղղենք մեր քայլերը դէպ ի մտաւոր ու բարոյական վերածնութիւնը։— ահա ազգային երգչի քառասուն տարի շարունակ քարոզած գաղափարների հիմնաքարը...»

«Թափ տանք մեզանից հնութեան փոշին,» կ'ըսէ «Մշակ», շարունակելով «մոռանանք հին կեանքը և դիմենք դէպի նորը... Թողնենք հին, մեռած լեզուն և ստեղծենք, ընդունենք նորը, կենդանին.. Մոռանանք, թողնենք հին միտքը, հին աշխարհահայեցողութիւնները, և աներկիւղ ուղղենք մեր քայլերը դէպի նոր, ժամանակակից գաղափարը, ժամանակակից, քաղաքակիրթ, լուսաւոր կեանքի պահանջման համեմատ՝ վերածնենք, վերաստեղծենք մեր կեանքը,— ահա ինչ էր քարոզում մեր յիսուներորդ թւականների ազգային հոկայ աշուղը, և ահա ինչի մէջն է նրա ամբողջ նշանակութիւնը՝թէ մեր ներկայ և թէ մեր ապագայ սերունդների համար։» («Մշակ» թ. 99, 1892 կախման կեսերն Մշակին են։)

Ըսել թէ Գամառ-Բաթիպա կ'ուզէր նոր բարք ու կեանք վերածնել մեր մէջ, այդ ուղիղ է և անվիճելի, բայց շատ ընդհանուր խօսք մ'է, և չթուիր Նորա գործունէութեան և ոգւոյն առանձին հանգամանքն ճշդիւ և լիով արտայայտել։ Վերածնել ազգն, բայց ի՞նչպէս. ի՞նչ միջոցներով կարելի է Հայոց ազգային վերածնութիւն յաջողցուցնել.

Ի՞նչպէս. զՀայկ ու զԼեւոն մոռանալո՞վ. հին դարերու Հայոց ամբողջ պատմութիւնը մոռանալո՞վ։ Ո՛չ։ «Հայկ ու Լեւոնին մոռանանք» ըսող Պատկանեան ինքն է որ կ'երգէ հոգւոյն խորերէն

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլար գնում եմ,
ՀԻՆ ՀԻՆ ԴԱՐՈՒՑ ՑԻՇԱՏԱԿ
Ալեաց մէջը պարում եմ։

Հին հին դարուց ազգային յիշատակներուն մէջ մխրճիլ պարտ է Հայուն, ոչ թէ զայնը մոռանալ։ Ջօրութեան աղբիւր մ'են այդ հին յիշատակք։

Եւ ի՞նչ, միթէ հնա՞ր է մոռանալանցեալն։ Նոյն Պատկանեան է որ կ'երգէ —

Ի՞նչպէս կրնամ ես տալ մոռացման
Քո սուրբ յիշատակն, Մամիկոն Վարդան,
Ո՞ր ազգի պատմիչք չարս—հինգ հատ ցուցին
Նման մեր անմահ Ղեւոնդ երէցին։

«Հայկ ու Լեւոնին մոռանանք, եղբարք։» Հայե՛ր, մեր անցեալ անկախ օրերու, մեր անցեալ իշխանութեանց փառքն որոճալով գոհ չլինինք. չըսե՛նք թէ ունինք Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան, Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան և մեք գմեզ կարծեմք ազգ հզօր և մեծ։ Անցելոյն կը վերաբերին դոքա, պէտք են մեզ նո՛ր Հայկ, Արմենակ, Վարդան Վահան, նո՛ր դիւցազներ, նո՛ր գինուոր, նոր ազատութիւն, նոր լեզու, նոր կեանք ազգային, ՆՈ՛Ր ՀԱՅԱՍՏԱՆ։

Բայց այդ նոր բաներն յոյնչէ պիտի չստեղծեմք,այլ պիտի կերպաւորեմք հները նորոգելով։

Պէտք է նոր լեզու ընդունիլ, այո՛, բայց ոչ թէ մոռանալով գրաբարն, հինն, այլ մխրճելով զնորն հին դարուց ազգային լեզուի վճիտ աւազանին մէջ, մաքրե-

լով ու զօրացուցելով զնորն հնով։

Նոյնպէս ժամանակակից աշխարհահայեցողութիւն, նոր մտքեր որդեգրելու ատեն պէտք չէ որ մոռնամք միշտ հիներն. լաւագոյնն հնին տեղ դնելու պայմանաւ պարտիմք մերժենք հինն։ Նրաստիրութեան տենդն թող չմղէ զմեզ վըտանգաւոր ջրերէ ըմպելու— չափազանցուած՝ հեռևապէս քացղած ճշմարտութիւններով արբենալու...

«Հայկ ու Լեւոնին մոռնանք» երգող պուէտն իւր քերթուածոց մէջ մինչև անդամ կը հրաւիրէ գմեզ հին դարուց ոգւոյն վերադառնալ։ Նա նուազ կը պնդէ դպրոցի և ուսման կարեւորութեան վերայ, որ առ հասարակ ճանչուած է, որքան բնաւորութիւնն չինելու, զօրացնելու վերայ,— որքան հին հեթանոս դարուց զինուորական ոգին, արական սիրտն, ան վախ տրամադրութիւնն առնելու վերայ։

Յայտնի իսկ է, կարծեմք, Գամառ-Քաթիպայ անձնական առանձին համոզումն, կեդրոնական գաղափարն։

Նորա բանաստեղծութեանց մէջ այդ գլխաւոր միտք տարածուած է, այսինքն թէ Հայեր՝ նոր հայաստան և նոր կեանք ստեղծելու համար՝ պարտին այժ և զէնք գործածել, յարգել սրոյ օժանդակութիւնը։ Սուր ու սուսեր, հրացան, դաշոյն, արիւն թափել և արութիւն, նշանաւոր տեղ կը բռնեն նորա գրուածոց մէջ։

Հայն կ'ըսէ Հայաստանի.

Զ'ունիմ ես ոսկի, այլ ոսկու մաղան,
Զըլոտ ձեռք ջուխտակ ու սիրտ անվեհեր,
Զեռքումս ունիմ բահ ու հրացան,
Սրտումս ունիմ ազնիւ խորհուրդներ։

Քու հողն՝ արգաւանդ, ես՝ մշակ արի,
Մենք հաշտ կու ապրինք շատ ու շատ տարի.
Ուրջուներէդ քեզ ոչինչ չահ չըկայ,
Թո՛յլ տուր որ բռնի հալածեմ նոցա։

Հարաւ, հիւսիսէն փոշի վերացաւ...
Զայն, տրուփ, խօսք, շըշուկ գիլգիլ լսուեցաւ...
Մասսայ ճակատէն մէգը հեռացաւ...
Մանուկ-Հայաստան ոտքի կայնեցաւ։

Այս վերջին տան առաջին երկու տողերն համառօտ նկարագիր են պատերազմի, և պատերազմէն յետոյ է որ Նոր Հայաստան ոտքի կը կայնի։

«Վանեցու մօր երգը» կը վերջանայ սապէս,

Տո՛ւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ,
Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դընեմ.
Ըսարուկ գընա՝ արեան դաշտը, վերադարձիր ազատուած.
Արդեօք մի օր պիտի լըսե՞ս մեր խնդիրքը, ո՛վ Աստուած։

Եւ ահա «Վանեցի Գեղջուկի Տաղը» ինչպէս կը վերջանայ,

Արի՛ փշրեմ ես քու խոփը, տանք դարբինին կըռելու,
Կռենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կըռուելու։
Եղբարք Հայեր՝ առ՛էք խոփը, տըէք դարբինին կըռելու,
Կըռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու։

«Ուսանող»ի բերանը կը դնէ նոյն ոգւով երգ մի, որոյ վերջին երկու համարներն սապէս կ'ընթանան,

Ով չի երդուել ընկերաց
Պաշտպան լինել հայրենեաց.
Վերջին արիւնը թափել,
Հայրենիքը ազատել։

Մեզնից էնպէսն հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թո՛ղ անասնոց կարգն անցնի,
Թո՛ղ մեր մէջ նա չմընի։

Ի՞նչ բանի մէջ է Հայութիւն։ Ընթերցիր «Հայ և Հայութիւն» երգին վերջին տողերն,

Դու պատրաստ ես թողնել կայքըդ, ծը.
Նողք, եղբարք սիրական,
Սիրելւոյդ տեղ կրծքիդ սեղմել միշտ մահաբեր հրացան.
Դու պատրաստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դէմ,
Սարսափելի մահդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադէմ։
Այդ ժամանակ քեզ Հայ կ'ասեմ...

. . . . . .

Բայց թէ փորդ տոլմաներից, կամ փըլաւից տըռաքի.
Հաւատացի՛ր՝ որ ուտելովդ օգուտ չես բերել ազգի։

թէև յառաջ բերուած կտորներն հերիք են, դնենք հոս ամբողջ այն երգն ալ, յորում Գամառ-Բաթիպա լիովին և յստակ կը բացատրէ իւր միտք։

ՄՇԵՑՈՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Երբոր մայրը երկունքով
Աչխարհ բեր՝, երախայ,
Հայրը որդուն մի սրրած
Պիտի դաշոյն տայ ընծայ։

Երբ երախան մեծանայ,
Խաղալիկներու փոխան՝
Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահաբեր Ռրացան։

Երբոր տղին վարժատուն
Գայ ժամանակ երթալու,
Նախ՝ սուր խաղցնել, ապա
Պիտ սովրեցնուն կարդալու։

Կարդալ գրել լաւ բան է...
Բայց օր հասաւ քննութեան՝
Աչակերտին հարցուցէք—
Վոթել գիտէ՞ նա արիւն։

Լոկ դուք այսպէս յուսացէ՛ք
Փրկել խղճուկ Հայաստան...
Ազատ, անկախ մարդ երբէք
Լինելու չէ մուրացկան։

Զ

Ի՞նչու Գամառ-Բաթիպա կ՚ուզէ որ Հայեր զինուոր ազգ մի լինին, որ հայ մանկունք օրօրոցէն և դպրոցէն սկսեալ դաշունի ու հրացանի հետ խաղան, և որ մինչև անգամ ծերացեալք հառաչեն

Թէ իմ ալեւոր հերքս սեւնային,
Այժս ինձ հետ գար, կտրիճ դառնայի,
Նըժոյգ ձի նստած, պեխքս ոլորած,
Ձեռքս թուր առած ես դաշտ կերթայի։

Միթէ բանաստեղծն արիւն թափելու, սպանութեան և պատերազմի սիրո՞ղ է, միթէ նա բարբարոսի ճաշա՞կ ունի։ Բա՛ւ լիցի։ Նա զինուց և արիւնհեղութեան ջատագով կը կանգնի նկատելով զայդ իբրև հարկաւոր միջոց ազատութիւն ձեռք բերելու համար։ և ազատութիւնն պայման կը նկատէ Հայոց բարոյական և տընտեսական զարդացման։ Նա կ՚ըսէ որոշ թէ Հայեր ցորչափ օտարի լուծն կրեն, պիտի մնան զուրկ մարդկային արժանապատուութենէ, մտաւոր ազատութենէ։

Օտարի Շահը թոյն է մահաբեր,
Աչք է կուրացնում, միտք է պղտորում,
Գերի է դարձնում մարդ ազատասէր,
Ոսկի չղթայով ձեռք ոտք է կապում։

Մինչև անգամ ի պանդխտութեան եթէ հարստանայ Հայն, դարձեալ տեսակ մի կապուած գերի է, թէև ոսկի«չղթայով» կապուած։ Բոնաւորի լծին տակ գտնուող բացում Հայեր.— հարուստներ, գիտուններ, բարձրադիր պաշտօնեաներ լուռ վըկայք են այդ խօսքի ճշմարտութեան։

Գամառ-Բաթիպա ի հարկէ շատ բան ի հաշիւ առած է հասնելու համար այդ եզրակացութեան թէ Հայք բուռն միջոցներով պարտին փնտռել ազատութիւն, ոչ թէ խնդրանօք և արտասուօք։

«Մեր հոգու վիշտը, մեր բոթն ու սուգը,
Աղեխարշ աչաց մեր արտասուքը
Ոչ ոք չտեսաւ, ոչ ոք չի ըզգայ.—
Լուսաւոր Եւրոպ կոյր ու խուլ մընաց։»

Եւ այլուր կըսէ.

Ազատութեան գինը մենք քաջ սերսեցինք
Էլ չենք հաւատալ օտարի խոստման։

Կը համարձակիմք ըսել թէ Գամառ-Բաթիպայ ազգային քաղաքականութեան այդ գծին համակերպող Հայերն այժմ ահագին բազմութիւն են, Հայաստանի մէջ և Հայաստանէ դուրս, այն Հայաստանի մէջ «որ դեռ միայն մեր սրտի խորքում ունի իւր հիմքը։»

Հաւատաց բանաստեղծն և երգեց.

Եղբարք՝ բանը դեռ անշօշափելի
Այժմուս մեր մտքին՝ ցընորք չկարծենք,
Բանը կ՚մարմնանայ ու տեսանելի
Կը լինի շուտ. միայն մենք վստահ լինենք։

Այդ հաւատքն ցնորական չէր, այսօր Հայոց բազմութիւն մի կայ անշօշափելի Հայաստանի մէջ որ իւր պաշտելի և անմահ բանաստեղծին կը ձայնակցի երգելու

Բաւ է, եղբարք, վիպ ճըկել,
Ողորմելի երեւիլ,
Ժամանակը հասել է
Հայ դրօշակին Ծածանել։

Այսուհետև արտասունք

Վախկոտները թո՛ղ հեղուն
Հայքս արդէն պատրաստ ենք
Վոթել աղնիւ մեր արիւն։

Ու չենք դադրիր վոթելու
Մեր հայ, աղնիւ արիւնը,
Մինչև ազգը չի ստանայ
Իրա ազատութիւնը։

Ախ ու վախը մենք մոռցանք,
Այժըմ գիտենք մենք ուռա՛.
Հա՛յք՝ գոչեցէք միշտ ուռա՛,
Որ թշնամին մեր դողայ։

ՀՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստան հին երկիր և նորա ժողովուրդն շատ կանուխէն քաղաքակիրթ ազգաց կարգն անցած լինելով՝ բազում հին հին յիշատակարաններ, սեպաձև արձանագրութիւններ, գեղարուեստական նըշխարներ ունի արժանի խնամոտ ուսումնասիրութեան և արդարև ուսումնասիրեալ նշանաւոր արևելագէտներու կողմանէ, որպիսի են Շիւլց, Հինքս, Լընոռման, Նորթման, Կիւյառ, Սէյսի, Ռոլինսըն և այլք։ Կան սակայն ծանօթութեանց այնպիսի աղբիւրներ ևս որք բուն Հայուն և մանաւանդ ի Հայաստան մեծցած ուսումնական Հայուն հետախուզութեանցն են մատչելի։ Եւրոպացի գիտունն կամ այցելուն յԱրևելս կը հանդիպի ժողովրդեան այն դասակարգին որ արևմտեան ազդեցութեանց տակ՝ մեծապէս մաշեցուցած է ազգային բնիկ գծերն թէ՛ ի սովորոյթս թէ ի բացատրութիւնս։ Ընդհակառակն՝ բուն Հայաստանի մէջ են ազգին խորագոյն խաւերն յորս կը պահուին անվթար հին հայկազան տարրներ։ Ժողովրդական այդ ներքին խաւեր յաճախ այնպիսի ճըշդութեամբ կը ներկայացուցանեն հայ ազգային կենաց մէջ դարէ ի դար կատարուած շրջափոխութեան նշաններն որպէս երկրին խաւերն կը պահեն երկրաբանական անցեալ դարուց դիպուածներն։

Ներկայ յօդուածով պիտի փորձեմք նոյն այդ խաւերէ իբր բնական արձանագրութիւններէ առած ցուցնել այն նշաններ որոնցմէ յստակ կը տեսնուի թէ Հայք երբեմն արևապաշտ, զրադաշտեան կամ մազդէական եղած են կրօնիւ։

Այդ կրօնի մարգարէն Զրադաշտ է, և Ս. Գիրքն՝ Զէնտ Ավէստա։ Զրադաշտ կ'ենթադրուի լինիլ 1200—1300 տարի առաջ քան զՔրիստոս։ Արարիչն կը կոչուի Ահիւրա Մազդա (զոր Եղնիկ «Որմիզդ»կ'անուանէ) և էական բարոյականն յայնմ կը կայանայ թէ կայ բարի և չար, արդարութիւն և անիրաւութիւն, որք յաւիտենապէս անհաշտելի են իրարու հետ, և թէ բարիներու պարտքն է պատերազմիլ չարին դէմ։

Նախ քան զՔրիստոս դարեր առաջ մազդէականութիւնն այնքան արմատացած էր ի Հայս որ ոչ յունական հեթանոսութեան դրութիւնն և ոչ իսկ քրիստոնէութիւնն զօրեցին ապա արմատախիլ ընել զայն Հայոց աշխարհէն։ Հայաստանի մէջ կրօնական աղանդներ կային այլև այլ անուամբ յայլ և այլ դարս յետ Քրիստոսի որք զանազան խառնուրդ էին մազդէականութեան և քրիստոնէութեան։ Այդ աղանդներու գլխաւորն էր անոնցն որք կը կոչուէին ԱՐԵՒՈՐԴԻՔ։ Սոցա դէմ ի Ե դարու մաքառեցաւ Ս. Մեսրոպ և ի ԺԲ դարու Ս. Ներսէս Շնորհալին։ Մինչև ԺԵ դարու մատենագրողք ոչ յիշած են զԱրևորդիս, պատմելով թէ ինչպէս ի պատուի էին առ նոսա ինչ ինչ արևադարձ ծաղկունք։

Մեք մեր իսկ ականջօք լսած եմք յԱկն հայ պատանեաց երգնուլն արեւով. — կ'ըսեն. «Արև՛։» Եւ այդ երգում պահուած է հայ ընտանեաց մէջ առաւել քան 2000 տարիէ ի վեր ուրեմն։ Կաղանդի գիշերն սովորութիւն է յԱկն ճրագն վառ պահել մինչև առաւօտ, որ յայտնապէս մաշած ձեւն է գեղեցիկ հրավառութեանց որք կը տեսէին բոլոր գիշերն։ Արդարեւ մինչև այսօր ալ այն գաւառաց մէջ ուր վառարանով կը տաքցուցանեն տներն, ընտանեաց պետն նոյն գիշերն, նախ քան երթալն յանկողին, մեծ կոճղ մի կը դնէ վառարանի խարուկին վերայ, որ կը վառի մինչև առաւու։ Տեառնընդառաջի տօնին ևս հրավառութեանց սովորութիւնն կը յարգուի ցայսօր շատ հայ գաւառաց մէջ, ի մասնաւոր պատիւ նոր հարսանց ու փեսայից։

Հայերէն լեզուի նախնական կրօնական

անուանք ևս նոյն Զրադաշտեան դրութենէ ծագած են։ Օրինակի համար «Դժոխք» բառն, որ Զրադաշտի Տուզախն է— կը նշանակէ այն անդունդն որ կամրջին տակ է և ուր մեղաւորն կ'իյնայ կը սուզի։ «Դեւ» բառն ևս նոյն աղբիւրէն է, Daevas էն, որ յունարէն Զեւս եղած է, և զոր Ֆրանսերէնի (divi) և անգլիերէնի (divine) մէջ ևս կը գտնեմք ածական ձեւի տակ։ Միայն թէ հայերէնի մէջ այդ բառին բուն արմատն եղող տիւ բառն ևս կայ, որ կը նշանակէ օր կամ լոյս։ Հայերէն դիւային բառին հետ նոյն է անգլիերէնի տիվայն՝ այսինքն աստուածային նշանակութեամբ բառն. և նշանակութեան տարբերութիւնն անտի կուգայ զի մինչ անգլիերէն տիվայնի առումն վեսայական հին դրութեան համաձայն է, յորում բոլոր ոգիներն բարի են կամ աստուած, հայերէն դիւայինն իւր նշանակութիւն առած է ըստ Աւեստայական զարգացեալ դրութեան, յորում երկուսութեան, բարւոյ և չարի գաղափարն կը տիրէ, և ոգիք ալ բաժնուած են ի բարի և ի չար, յաստուածս և ի դեւս՝ միմեանց հակադրեալ։

Արեւն ու հուրն մեծ տեղ կը բռնեն մաղտէական դրութեան մէջ, որոյ Ս. Գրքին, այսինքն Զէնտ Ավէստայի մէջ, որ աղօթքներէ կամ սաղմոսներէ կը բաղկանայ, արեւուն և հրոյն ևս խօսք կուղղուի։—«Կ'երկրպագեմ, կ'ըսէ, և կը պաշտեմ զԱրարիչ ամենայն իրաց, Որմի'զդ, լի լուսով։ Ո՛հ հուր, կը կոչեմ զքեզ, որդիդ Որմզդի, արագագոյնդ անմահից։ Կը կոչեմ զԱրև, բարձր, անմահ, սուրբ զԱրեւ, զվարիչն, զսրագ Զին, զակն Որմզդի։..»

Վերեւ յիշեցինք թէ «արեւ» ըսելով երդնուլն այնքան ազդու երդում է ինչպէս «խա՛չ» կամ «քարնա՛մ» կամ «Աստուած վկայ» երդումներն։ Արև բառն ընտանեկան լեզուի մէջ կը գործածուի նաև կեանք, առողջութիւն, բարօրութիւն նշանակութեամբ։ Հետևեալ ընտանեկան ասացուածք Ակնայ հայերէնէն ի մէջ կը բերեմք ի հաստատութիւն։—

Արևուդ մեռնիմ— կ'ըսէ մայրն իւր տառապեալ զաւկի վերայ գթալով։

Զաւկներուս արևուն— կ'ըսէ աղաչողն։

Արեւդ ուր կը սիրես

Արևուդ համար

Երկան արև լըմիս։ — Արևդ կանա՛չ. —

Աստուած արև շատութիւն պարգեւէ։— Աստուած արևուդ պահապան.— մեծերուն օրհնէքն են։

Բարին արևդ լըմի այդ խօսքով կ'օրհնէ ծեր կինն երբ տեղ մի երթայ և իրեն «բարի եկար» ըսեն դեռահասներ։

Օր ու արև չտեսաւ — կը նշանակէ երջանիկ օրեր չունեցաւ։

Կարճարև եղաւ՝ — ըսել է դեռահասի տոց մէջ մեռաւ։

Արևդ ծալես — արևդ հողը դնես — անէծք են։

Ցայտնի է թէ մեր հինգերորդ դարու մատենագրողք ևս գործածած են «արև» բառն այդ մտօք։— երդնուլ յարև թագաւորին։— յարևէ արկանել։— տեսանել զարև, ևն։

Արև բառէն զատ «հուր» բառն ևս յաճախ կը գործածուի ընտանեկան ոճերու մէջ «Խրեղէ՛ն» կ'ըսէ մայրն յանդիմանելու համար զաւակն երբ սա իւր հասակին անվայել յանցանք մի գործէ։ Կ'ըսուի նաև «Խրեղէն մին ես եղեր», այսինքն հրեղէն, իբր հրեշտակի չափ յաղթ և մեծ։ Ուրիշ գաւառաց մէջ կ'ըսեն «Հուր ի հրեղէն է» աղջկան վերայ խօսելով՝ նորա գեղեցկութիւնն գովելու համար։ Հուր և հրեղեն բառերն գեղեցկութեան և զօրութեան մարմնացումն կը նկատեն եղեր մեր արեւապաշտ նախնիք։

Իբրեւ յատուկ անուն անձանց գործուած է «Արև» անունն, ինչպէս նաև «Հուր» բառի բարդութիւններ— Հրաչեայ, Հրանտ, Հրանոյշ, Հրազիկ։

Ընթերցողք պիտի յիշեն նաև «Երկնէր երկինն», զոր Գողթան հայ երգիչներու բերնէն ի գիր առած է Խորենացին։ Այդ սքանչելի կտոր լի է հուր, բոց, ծուխ, արեգակ բառերով, որ յայտնապէս չինուած է արեւապաշտութեան դարուց մէջ՝ Արեգին ծագման ատեն երգելու համար։

Բաղձալի է որ «արեւ» և «հուր» բառերով չինուած հայ հին ասացուածք արդի հայերէնի մէջ ընտրանօք գործածուին։ Դժբաղդաբար նոր սերնդի ուսուցիչներ կը խորշին այդ բացատրութիւններէն որք հնութեան զմայլելի բուրում և պատմական արժէք ունենալէ զատ՝ իբրև ազդու և յատակ ասացուածք ճոխութիւն են հայ լեզուին։

ՀԱՅՈՑ ՇԱՐԺՄՈՒՆՔ

ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԵԱԿ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Բուսչուք, Պուլկարիա,
15 Դեկտ. 1892

Ազնիւ խմբագիր,

Խնդրում եմ այս ընդհանուր տեսութեան մի անկիւն շնորհէք ձեր պատուական Հանդիսում, որը հետ գՀեսէ աւելի համակրանօք կարդում ենք այստեղ։

Ա.

Բերլինում ստորագրուած հանգուցեալ 61դ յօդուածից դէպը Հայ ժողովուրդը թէ Տաճկաստանում թէ Ցուսաստանում իմացան թէ ի Տաճկաստան բարենորոգումներ պիտի մտնեն։ Բայց տարիներ սահեցան ու այդ ցանկացուած օրուայ արշալոյսը չտեսան Հայեր։ Ներսէս Պատրիարքից սկսեալ մինչ յետին ռամիկը գգացին թէ իրենց խաբում են։

Այն ժամանակ Պատրիարքը պատուիրակներ հանեց առաքելոց թուով որ երթան Հայի ուժերն ուսումնասիրեն։ Սոքա մէկ տարուայ չափ պտըտեցան բոլոր Տաճկահայ գաւառները, անխտիր մուտք ուելք ունենալով Հայոց հետ խառն ապրող այլ և այլ ցեղերի հետ՝ Կարսից Ալաշկերտ Ալաշկերտից Բասեն, Վան, Մուշ մինչև Խոզատ և Տիվրիկ։ Ռուսաստանում իսկ կային կամաւորներ որոնք լսելով Տաճկահայերի այս ձգտումները՝ սկսան անոնց հետ բանակցիլ և պատրաստուիլ։

Սպասեցին մինչև 1882ի ձմեռը, երբ մի քահանայի մատնութեամբ Հայոց պատրաստութիւնները իմացուեցան, գաղանի «Զինակիր» անուն ընկերութիւնը Կարինում քայքայուեցաւ, որու հետևանօք հարիւրաւոր Հայեր բանտարկուեցան։ Սոցա խմբապետներից հինգը 10—15 տարուայ բանտարկութեան դատապարտուեցան, 10ն ալ 5 տարի։ Այդ հնգերից երկուքը այժմ Ամերիկայում են, երկուքն մի տարի առաջ կնքեցին իրեց մահկանացուն։ Հինգ տարուայ բանտարկութեան դատապարտուածներից ոմանք 4 ոմանք 5 ու կէս տարի բանտի ձանձրոյթը կրելուց վերջ՝ շնորհիւ Ց. Վեհապետեանի, իբր իւր պատրիարքութեան գլուխ գործոց, ազատեցան։

1882ի մատնութեան օրերից սկսեալ թուրք բռնապետութիւնը դիտեց արդոսեան աչերով մեր բոլոր շարժումներն. և աւելի ևս խստութեամբ՝ Զուխ Եէսիկի փոքրիկ շարժումէն ի վեր։

Բ

Տաճկահայաստանում մի ժամանակ մամուլը այնպիսի ազատութիւն կը վայելէր շնորհիւ ապուշ կառավարութեան, որոյ նմանը երբէք չպիտի տեսնէ յետ այսու։ Այն միջոցին հրատարակուեցան ոգեւորիչ մտքերով գրուածներ արձակ թէ ոտանաւոր։ 1881ից սկսեալ մամուլի ազատութիւնը սեղմուիլ սկսաւ, և տարուց տարի մինչև 1886, երբ սոսկալի խստութեան հատաւ գրաքննութիւնը։ Ցաւ է ասել թէ Հայ թուղթն ու գիրքն հայ վարժապետին ու խմբագրին էր մանաւանդ հետաքրքրիլ։ 1876ից մինչև 1886 հայ թերթերով զբաղուող ժամագիրք և նարեկ դատախօսող տիրացու վարժապետք երբ այլ ա այլ պատճառներով իրենց տապարէգից վտարեցան, սկսան դէս ու դէն ժուռ գալ։ Ոմանք անմարսելի սուտերով համեմեալ ծրագիրներ խեղճ ռամկին ներկայացուցին. և ռամիկը ըսկսաւ հաւատալ թէ կայ իրօք մի մարմին որ պիտի կատարէ մեծ բաներ։ Ռումանիոյ և Աւստրիոյ Հայերը 15,000 ֆրանք հանգանակեցին թելադրութեամբ Պարոն Թ. ի 1890ին, զոր պիտի տային դաշնակցութեան անդամներին որ գնան գործեն. բայց ոմն իւր ցաւուկը մէջ խոթեց։ Իսկ Պարոնայք Թ. և Ե. Պ. խորհեցան փոխանակ յեւրոպա՝ ի Տ., Ծ. ի քով դրամատան դնել այլ և այլ տեղերէ դրկուած գումարներն։ Բայց այս մտքին դէմ ալ արգելքներ հանուեցան։ Դարձեալ Պ. Ա. ի 20,000 մանէթ տրուեցաւ որ երթայ ի Կ. գործէ, և սա ալ գնաց Մ. ի «Հ.»ն գնեց։ Ժողովրդեան քսակը պարպողներից մին ալ Պրն. Ց. Զ. եղաւ։ Այս ամենն և ասոնցպէսներ ժողովուրդն անբարոյականացուցին, զի սա իւր փողն առնողներէն արդիւնք չտեսաւ։

Ասել կ'ուզեմ իրրեւ եզրակացութիւն, ազնիւ խմբագիր, թէ ժողովուրդն փոքր ի շատէ տուած է, անձնուիրութեան քաջալերիչ նշաններ ցուցած է, բայց գործիչ կոչուածները, ի մեծ դժբաղդութիւն ազգին, այնքան հաւատարիմ և խոստմի-

ապահ եղած չեն, որը չատ և որը քիչ խաբեբայ գտնուած են։ Այս ամենու գարմանը կը լինի եթէ ձեր խելացի առաջարկը ընդունուի և արժանաւորագոյններէ բաղկացած մի կեդրոնական մարմին յօրինուի։

ԻՐԱՉԵԿ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱՇԼԳԵԱՆԻ

ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Համալսարանական մի ուղղած է մեզ հետեւեալ խիստ տրամաբանութիւնը։)

Կրնամք ենթադրել թէ արտասահմանեան հայ լրագրութեան դէմ կը սրտմտի Սրբազան Պատրիարքը՝ տեսնելով թէ Բ. Դուռը կը սրտմտի։ Հարցնենք սակայն թէ ի՞նչ օգուտ կը սպասէ նա այն կոնդակներէն զորս կը խմբագրէ։ Վերջին կոնդակն, որով կ'անիծէր բոլոր ազատական խմբագիրներն, չէ կարդացուած, և սակայն քանի որ անոր բովանդակութիւնն հրապարակ ելաւ, գրուածին դիտումն կրնամք նկատել իբրև կատարուած։ Անիծել ուզելը չատ տարբեր չէ անիծելէն։

Կը հարցնենք — Սր. Պատրիարքը կարդացած և քննա՞ծ է իր անիծել ուզած թերթերն բոլոր։ Հաւանական չերեւիր այդ։ Հաւանական է թէ Բ. Դրան քընիչք այդ պաշտօն կատարած են. նոքա քննած են և Պատրիարքին հրաման ըրած են որ անիծէ զայնս։ Եթէ այդպէս է, ուրեմն Պատրիարքը իւր սրբազան կարգին ու դիրքին բոլոր իրաւունքներովն անձնատուր եղած է մահմետական կառավարութեան, և այս՝ մատնութիւն է պարզապէս։

Պատրիարքին փափաքը այն չէ որ այս ինչ թերթերը ուղիղ քաղաքականութեան հետևին, այլ որ բոլորովին վերնան, խափանուին։ Ուղղել չկրնար, այլ ջնջել. դարմանել չուզեր, այլ սպաննել։

Բայց այս լրագիրներն ջնջել ուզելու համար պայման մի հարկաւոր է, այն թէ թրքահայ չրագրութիւնն ազատ լինէր գրելու ազգային խնդրոյն վերայ. այն ատեն արտասահմանի թերթերուն պէտք չկայ պիտի կրնար ըսուիլ։ Սակայն Թուրքիոմէջ մամլոյ ազատութեան ստուերն անգամ չէ մնացած, ինչպէս որ «Փունջն» լաւ գիտէ, և բոլոր լրագիրք ալ։

Դարձեալ կը հարցնեմք թէ Սր. Պատրիարքը ինքն, իբրև ազգին դլուխն, ի՞նչ կ'ընէ հայրենեաց օգնելու համար։ Եթէ ինքն չնորքով բան մը ընելու ձեռնարկած լինէր, կրնար դրսէն աշխատողներուն ըսել— զուակներս, դուք դեռ ճահել էք, դուք մի՛ խառնուիք. թողէք որ ես ինչ որ պիտի ընեմ ընեմ. դուք գործը կ'աւարէք։

Պատրիարքին խօսքերէն ու գործերէն դատելով՝ չերեւիր թէ կարող է այդպիսի լեզու մի հայրօրէն գործածել դէպ ի ազատական թերթերն։— Հարկաւ թերթ կոչուելու արժանի թերթերուն վրայ է խօսքս— կը համարձակիմ ալ ըսելու թէ նոյն ինքն պատրիարքը կարօտ է արտաքին քաղաքականութեան մասին «Լ'Առմէնին» ու ներքին քաղաքականութեան մասին «Հայք»ը կարդալու, սերտելու ուշի ուշով։

Եւ այն թերթերուն որոց ազգին գըլուխն իսկ ինքզինք կարօտ կը ցուցնէ, Ազգն ալ կարօտ է։

Ուրեմն թող տպրին Հայք և Լ'Առմէնի։

Եթէ յոյս ունենայի թէ այս տողերս Սր. Աշըգեանի աչքերուն կը հանդիպին, պիտի չվերջացուցնէի առանց դիտողութիւն մ'ալ ընելու։ պիտի ընեմ այդ դիտողութիւն ինչպէս ալ որ լինի։

Աշխարհ գիտէ թէ Հայեր օգնութեան կարօտ են. եթէ կայ բան մը որուն վրայ կը տարակուսին օտարք, այն է թէ արդեօք Հայերն օգնութեան արժանի՞ են։ Հայոց ազատութիւն չտրուիր, վասն զի կը կարծուի թէ Հայք ազատութեան արժէքը չեն ճանաչեր. և ինչո՞ւ կը կարծուի թէ չեն ճանաչեր ազատութեան արժէքը.— անոր համար որ ազատութեան համար ըստ արժանւոյն չեն աշխատիր, չեն ճգնիր, կ'ըսուի։ Արդ, ո՛վ որ կրնայ տալ, պէտք է տայ դրամ. ո՛վ որ կրնայ խորհուրդ տալ, պէտք է տայ խորհուրդ, ո՛վ որ կրնայ արժանապէս գրել, պէտք է գրէ, ո՛վ որ կրնայ դիմում ընել, ընէ. ո՛վ որ կրնայ պատրիարք լինիլ արժանապէս, ընտրուի պատրիարք.— Պէտք է ամեն մարդ աշխատի, ամեն հայ իւր բաժին ընէ. պէտք է շարժի հայ աշխարհն, չար-

ժի անդադար մինչև որ փրկուի։

Պատրիարքն կամ քան զայն աւելի խելացի մարդիկ, կրնան ըսել թէ չարժողներն, գրողներն, տուողներն սխալներ կը գործեն։— Այո՛, սխալներ կը գործեն. և սխալիլը մարդկային է։ Ամենէն մեծ սխալը անոնք կը գործեն որք բնաւ չեն գործեր։ Լռեցի՞ք, սրբազա՛ն և ոչ-սրբազան անգործներ, ընչեղ և անինչ չտուողներ։ Հայուն համար ամենէն ահաւոր սխալն չգործելն է։

Ոմանք ալ պիտի ըսեն — մանաւանդ չգործողներն ու գործողներու անիծիչք— թէ ի՞նչ ըրած ունին, ի՞նչ ըրին ցարդ գործողներն։ Ի՞նչ ըրաւ «Հայքը», օրինակի համար, երկու տարիէ ի վեր պռռալով։ Ի՞նչ ըրաւ.— պռռաց։ Պռռալ լաւ է երբ ազգ մի կը կորնչի, կը խեղդուի, կը կոխոտուի, քան թէ լռել։

Իսկ թէ «Հայքի» քարոզած միութեան խնդիրը ինչ արդիւնք պիտի ունենայ, զայն գուշակել անհնար է։ Անհնարին յիմարութիւն չլինիր ըսել թէ կրնայ լինիլ որ այդ փոքր Հայքի այդ քարոզն ազգային փրկութեան գործոյն մէջ այնքան օգտակար լինի, ա՛յնքան օգտակար որքան 100 Աչըգեաններ իրենց բոլոր խելքովը չեն կրնար երազել։

«Հայքի» քարոզն չնչին հատիկի մի նման է. բայց յաղթ ու երկնարերձ ծառերն ալ հատիկներէ կ'ելնեն։ Կեցցէ ուրեմն «Հայք», և կեցցեն ամեն անոնք որք կեցուցին «Հայքը»։

ՈՒՍԱՆՈՂ

ՆԱՄԱԿ ՎԱՆԷ

Վան, 15 Նոյ., 1892

Անցեալ գիշեր ազգային մատնիչ ջոջերէն Թէրզիպաշեան Յարութիւն Աղայն սպաննելու փորձ մ'ըրին. այն որ հարուածը տուած է, բնաւ չէր յուսացուէր իրմէ այն աստիճան յանդգնութիւն։ Ինքը յաջողեցաւ կծիկը դնել։ Փոլիս Նուրին ալ որ ուրացեալ Աւետիս Պարթեւեանի մտերիմն ու գործակիցն էր, մի քանի օր առաջ կէս գիշերի միջոցներն սպաննուեցաւ անծանօթ ձեռքէ ի Քէնտրջի փողոց։ Այս դէպք ահ ու սարսափի մէջ ձգեց բոլոր քաղաքը։ Զրոյց կը չչնչուի թէ գաղտնի մարմին մը կենայ ի Վասպուրական, որոյ անդամք երդմամբ ուխտած են դարման տանիլ չարեաց...

Հարիւրաւոր հայ կտրիճներ քաղաքիս բանտին մէջ կը հեծեն։ Վրէժխնդրութեան ոգին բորբոքած է ամեն սրտի մէջ։ Զարնող զարնողի, սպաննող սպաննողի։ Հայ և Թուրք իրարու արիւն կարծես խմել կ'ուզեն։

Ամեն օր տարօրինակ լուրեր կը տարածուին։ Այժմ ստոյգ լինիլ կը թուի թէ այս օրեր պարսկական սահմանագլուխը զինեալ հայ խմբի մը և Քրդաց միջև արիւնռուչտ պատերազմ մ'է տեղի ունեցեր, յորում երկու կողմէն ալ շատեր սպաննուած կամ վիրաւորուած են։

Մօտ է ծմեռն. երբ ձիւն տեղայ, ամեն բան կը խաղաղի մի քանի ամսուան համար գոնէ. բայց ի՞նչեր պիտի բերէ գարունը, ի՞նչ աղէտներ և սոսկալի դիպմունք, այն ոչ ոք կրնայ ըսել։

Դեռ սկիզբն է երկանց։

ՀԱՅՈՒՀԻ

ՆԱՄԱԿ ՀԱԼԷՊԻՆ

(Հալէպ գտնուող օտարական մ'ուղղած է մեզ հետևեալ նամակն, զոր կը թարգմանեմք ինչ ինչ կետեր դուրս ձգելով։)

Հաճինի եպիսկոպոսն աքսորուեցաւ ի Պումպուճ, որ Նորահաստատ Զէրքէզ գիւղ մ'է։ Այս եկեղեցականին յանքանքն այն է եղեր որ 10 տարի առաջ պսակեր է մահմետականութենէ դարձած կին մի։

Հալէպի հայոց գերեզմանատան մէջէն Ֆէրիք փաշայի կառքին ազատ անցք տալու համար 250 գերեզմանաց քարերն ի բաց գլորեցին, շատ ոսկրոտի կայ այժմ երեւան ելած։ Մեծ խայտառակութիւն կը նկատուի այս, բայց քրիստոնեայք ստիպուած են իրենց շրթունքն խածնելով մուռ անել։

Այս կողմեր եռանդուն հայ բժիշկ մի, Տր. Էնֆիէճեան, կը գործէր ժամանակէ մ'ի վեր և կառավարութեան կասկածն հրաւիրած էր իւր վերայ։ Զորս շաբաթ առաջ ձերբակալուեցաւ յիշեալն։ Ինքը Պոլսեցի էր, և Քիլիսի քաղաքական բժիշկ էր

առաջները։ Այն ատեն երբ իւր բնակարան խուզարկուեցաւ ի Քիլիս, Էնֆիէճեան կը գտնուէր յԱյնթապ։ Եղելութեան լուրն առնելով՝ կը ճեպէ ի Հայէպ։ Հալէպի Արարատեան Օթէլն հագիւ իջեւանած էր նա, երբ կարապետ անուն ոմն գնաց տեսնել զինքը։

Կարապետի մասին միջանկելօրէն ըսեմ թէ երբեմն Հայոց վարժապետ և տիրացու էր, ապա փոլիս դարձաւ. ու այժմ խաֆիյէութեան պաշտօնով կ'ապրի։ Այս դէպքերէն վերջ անցաւ գնաց ի Պոլիս։ Առաջ երբ ի հալէպ էր, շատ ազգասէր ոք կը համարուէր, և ամեն բանի իրազեկ էր։ Բժշկապետ Է. ի հետ ևս բարեկամական յարաբերութիւն ունէր։

Արդ, մինչ Կարապետ կը խօսէր Տր. ին հետ, փոլիս մի հասաւ և տարաւ զԷնֆիէճեան ոստիկանութեան կայանը։

Երկու օր վերջ բանտարկուեցաւ նաև Ռուբէն Գալէմքէրեան, և ուրիշ Հայեր ալ։ Նոյն ատեն Այնթապի մէջ ևս բանտարկուեցան քանի մի երիտասարդներ — Փիլիպոս Էֆ., Պաղտասար Պաղտասարեան (դեղագործ) և Տր. Պօղոսեան։ Փիլիպոսի և Պօղոսեանի տներն խուզարկելով՝ կառավարութիւնն գտած էր ոչ այլ ինչ բայցեթէ մասօնութեան վերաբերեալ թղթեր։ Պաղտասարեանի ընչից մէջ ոչ ինչ գտնուած է կասկածելի։

Քանի մ'օր յետոյ, ի Հալէպ, 20 տարեկան հայ երիտասարդ մի՝ Արաբկերցի, հարցաքննութեան ենթարկուեցաւ, և հետևեալն պատմեց։— Զմիւռնիոյ մէջ զիս բռնի մահմետականացուցնել կ'ուզէին, փախայ եկայ ի Հալէպ. հոս Պ. Ա. ի դիմեցի, որ խոստացաւ գործ գտնել ինձ Գալէմքեարի քով, իսկ եթէ փնտրուիմ, փախցունել։ Ցիրաւի, փնտրուեցայ, և նա փախուց զիս ի Քիլիս. անդ տեսակցեցայ Տր. ին հետ։ Անտի գնացի ի Մարաշ, ուր ձերբակալուեցայ։

Այս խոստովանութեան վերայ՝ առին զերիտասարդն և պատցուցին Հալէպի շուկաներն, որպէս զի որոց հետ որ տեսնուած էր, մատնանիշ ընէ։ Երիտասարդն ալ այնպէս ըրաւ. Ա. ին հետ ձմերուկ կերայ, Բ. ինձ սիկարա հրամցուց։ և այլն։ Այս մատնացոյց եղածներէն ոմանք ալ բանտարկուեցան։

Այս շաբաթ կ Պոլսէն հասած հրամանի մի համաձայն՝ Այնթապի բանտարկեալ երիտասարդներն արձակուեցան։ Մնացելոց դատն Հալէպի ալիէին յանձնուեցաւ։

ԵՒՐՈՊԱՑԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

Ի՞ՆՉՊԷՍ ԿՐՆԱՆ ՀԱՐՍՏԱՆԱԼ

Շատ դժուար բան է Ամերիկայի հայ պանդխտին հարուստ լինիլ։ Նա չափաւոր, համեստ շաբաթականմիայն կ'ընդունի։ Նորա առաջին՝ երբեմն երկու տարուան բոլոր շահն կ'երթայ պարտքերն ու ծանր տոկոսներն վճարելու։ Միանգամայն ընտանեացն ալ ապրուստին համար պէտք է դրամ յղէ ի Տաճկաստան։ Երբեմն ալ կը պատահի որ ամիսներով անգործ կը մնայ և ներէն պարտքի տակ կ'իյնայ։

Հակառակ այս ամեն պարագայից, Ամերիկայի հայ գործաւորն վերջապէս պարտքերն կը վճարէ և դրամ աւելցունել կը սկսի։ Նա այս նկատմամբ տարբեր է եւրոպացի, յանուանէ Իտալնտացի գործաւորէն որ բոլոր վաստակն կ'ուտէ և կը սպառէ շաբաթէ շաբաթ։ Եւ ի՞նչէն կուգայ տարբերութիւնն։

Հայն իւր հայրենեաց մէջ ժուժկալ և աշխատասէր կեանք վարելու վարժուած է. նա իւր պէտքերն հոգալու և կառավարութեան և հարստահարիչներուն պահանջներն ևս գոհ ընելու համար չարաչար աշխատելու սովորած է, քիչ վայելելով, միայն ամենաէական պիտոյքն գոհացունելով։

Երբ Ամերիկա կուգայ, նա յօժար է առաւօտուն կանուխ երթալ ի գործանոց, աշխատիլ մինչև իրիկուն, և բնակարան վերադառնալով իւր կերակուր պատրաստել իբրև ինքն իւր խոհարար. ուտել և հագիւ ժամ մի հանգչելէ յետոյ, պառկիլ քնանալ, որպէս զի առաւօտուն կանուխ ելնել կարենայ։

Այսպէս նա ոչ ճաշակ ունի և ոչ ժամանակ շռայլութիւն ընելու։ Եւ այդ շնորհիւ է որ նա կարող կը լինի համեստ շաբաթականէն բան մ'աւելցունել։ Քիչ կը վաստկի, բայց աւելի քիչ ալ կ'ուտէ,

այնպէս որ կրնայ թէ՛ ընտանեացն օգնել թէ՛ ապագայ դրամագլխոյ մի հիմ դնել։ Շատ գործաւորներ կան որք 50էն 100 կամ աւելի օսմանեան լիրա կրցած են այսպէս դիզել, ինչ որ տաճկաստանի մէջ նշանակութիւն ունի։

Բայց այս նկարագրուած գովելի պատկերն խանգարող բաներ ալ կան։ Գաղթականութիւնը հինցաւ, ոմանք հոս հինգ կամ տասն տարի մնացած, անգլիերէն խօսելու վարժուած, Իռլանտացի գործաւորաց հետ ինկած ելած լինելով, կամաց կամաց հայկական պարզկեցութեան շաւղէն դուրս ելած են։ Հայ կայ այժմ որ սովորած է խմել, թուղթ խաղալ (դրամով), սիկար ծխել, և դեռ ուրիշ բաներ։

Եւ երբ Հայ մի ինքզինքն, իւր ընտանիքն ու իւր մոլութիւններն միանգամայն ապրեցուցնելու վիճակին հասնի, վստահ եղիր որ ընտանիքն ու հայրենիքն կը մոռնայ նա, զի իւր համեստ վաստակէ այլ ևս բաժին չկրնար հանել ընտանեացն հայրենեացն, և ոչ ալ կրնայ դրամագլուխ կազմել։

Ուրեմն մեր ամերիկայի հայրենակիցներուն այս է մեր խնդիրք որ նոքա զիրար խրատեն, զիրար եղբայրօրէն զգուշացուցնեն մոլութեան առաջին քայլէն։ Մեք, բժշկական սկզբանց վերայ հիմնուած, կրնամք ըսել թէ մարդս կարող է առողջ ապրիլ առանց ոևէ ոգելից ըմպելի գործածելու չափով կամ անչափ։ Ոմանց պէս չեմք ըսեր թէ քիչ մի լաւ գինին, քիչ մի լաւ գարեջուրն ալ ինաս են մարդուն. այլ կսեմք թէ հարկաւոր չեն. ուստի և ապահովագոյն ճամբան մեր հայ գործաւորաց համար է բնաւ չխմել այդպիսի ըմպելիք, ոչ քիչ և ոչ շատ։

Եղբայրներ, երբ ձեր համբերող, աշխատասէր և խնայող տարիներն անցուցնելէ յետոյ՝ դրամագլխով ու Հասուն գլխով դառնաք ի հայրենիք, հոն խմեցէք երբեմն «Հայոց գինին»։

Բերաննիդ տարէք անվախ,
Զէ այն խառնած կամ խարդախ.
Նեկտար է և ոչ գինի,
Խմեցէք, անուշ լինի։

Բայց այս երկրին գինիէն ու ամեն ըմպելիքէն և բոլոր աղտոտ բաներէն ըզգուշացէք, դուք այս տեղ քեռ ընել չէք եկած. համբերեցէք որ քեռ ընէք ձեր ընտանեաց հետ, ձեր քաղցր հայրենեաց ծոցին մէջ։

Ազգային

ԼՈՒՐԵՐ

ՎԱԽՃԱՆ ԳԵՐ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց ևս վախճանեցաւ Խորէն Նար Պէյ եպիսկոպոսի վախճանմանէն քիչ օրեր յետոյ։ Խմբագիր մեծանուն Արծրունւոյ մահն ևս յանկարծուս վերայ հասնելով՝ երեք կարեւոր մահեր գրեթէ միանգամայն ողբալու դժբաղդութիւնն ունի այժմ Հայ Ազգն։

Գարեգին եպիսկոպոս Խրիմեան Հայրիկի անդրանիկ և սիրելի աշակերտներուն, ըսենք զաւակաց՝ մին է և իւր Հայրիկի նման շատ ժամանակ անցուցած է հայրենիքն ուսումնասիրելու։ Շատ ալ գրած է։ Նա կենդանի Հայաստանի մէջ ապրող ազգային մեծաքանակ տարրեր հաւաքած գանձած է իւր «Գրոց ու Բրոց» իւր «Մանանայի», իւր «Հնոց Նորոց»և այլ մատենից մէջ։ Շատ հէքիաթ, շատ առակ, շատ բառ ու ոճ մեր հին մամերու ու պապերու մէջէն իբրև ի հանքաց՝ հանած է ի լոյս աշխարհ։ Սրուանձտեանց առաջինն եղած է այդ կարգի ժողովրդային պատուական գանձեր հաւաքելու և հրատարակելու։ Նորա այդ մասին ծառայութիւնն մեր գրականութեան, մեր ցեղագրութեան և լեզուաբանութեան մասին շատ թանկ է, և յաւէրժ պիտի յիշուի ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ անունն իբրև ուշիմ և բազմաշխատ հայ մատենագրի։

Գարեգին եպիսկոպոսի մահն մեզ ի մօտոյ կը զգածեցուներ. զնա անձամբ ճանաչեցինք մեք ի մօտոյ երբ նա առաջ նորդ էր Ակնայ։ Երբ մեք յետոյ ի Փարիզ ուսանող էինք, միանգամ համալսարականաց խմբի մի առջև Հայաստանի վերայ ճառ խօսելու հրաւիրուեցանք։ Այդ ճառի մէջ բաղձացինք դնել բաղում ինչ։ Գրեցինք Գարեգին եպիսկոպոսի որ օգնէ մեզ ճառի մէկ մասին մէջ, ցուցնելով մեզ թէ ինչ են գլխաւոր տարբերութիւնք Հայ և Յոյն եկեղեցեաց միջև։ Փութացած էր պատասխանել մեզ, բաւական երկար պատասխան մի, յորմէ կը տեսնուէր թէ եպիսկոտոսն քան զմեզ աւելի մասնագէտ

չէր այդ խնդրոյ մասին, քանզի հարցուած տարբերութիւններն պարզող ոչ ինչ կար նամակին մէջ որ միայն Հայ եկեղեցւոյ ծանօթ դաւանանքն կը նկարագրէր։

Այլապէս օգտեցանք սակայն մեր բարեկամի նամակէն։ Իբրև Հայ նշանաւոր եպիսկոպոսի ձեռագիր՝ ուսանողք զնամակն ձեռքէ ձեռք անցուցին յարգալիր հետաքրքրութեամբ դիտելով թէ ինչպէս կ'երևի հայ ձեռագիր մի։

Սրուանձտեանց լաւ կը քարոզէր և լաւ ևս կը խօսակցէր· Նա ընկերական մարդ էր, քաղցրաբարոյ և քաղաքավար, առանց ոմանց գոռոզութիւնն և այլոց նըկուն կացքն ունենալու։ Մեք կը հաւատամք թէ նա անկեղծ հայրենասէր մ'էր, և թէ պիտի նախընտրէր դաւառային առաջնորդութիւնն Պոլսական դիւրակեցութեան՝ եթէ կառավարութիւնն հարկ չհամարէր զնա անմիջական հսկողութեան տակ պահել։

ՄԱՐԶՈՒԱՆԻ ՑՈՒԶՈՒՄՆԵՐՆ

Հնչակէն կը համառօտեմք հետևեալն

Մարզուանի մէջ յանիրաւի բանտարկեալ և բանտին մէջ քանիցս չարաչար ծեծուած հայ երիտասարդ մի՝ հոգին բերանն եկած՝ գիշեր մի քնացած ոստիկանապետին դրպանէն բանտին բանալին կը առնու և դուռն բանալով կը փախչի։ Կառավարութեան խուզարկութիւնք կը վրիպին երիտասարդն գտնելէ։ Քանի մ'օր յետոյ Ամասիոյ կառավարիչն կուգայ ի Մարզուան, և այդ առթիւ մեր թաքստականը հայերէն և տաճկերէն յայտարարութիւն մի կը փակցունէ փաշային դրտնուած տան պատին վերայ, այն իմաստով թէ կառավարութեան պաշտօնեայք գող և աւազակ են, և զանմեղներն կը կողոպտեն անիրաւօրէն։ Յետոյ մի քանի ընկերներով կը քաշուի ի Տավչան Տաղի, ուր իբր 40 ոստիկաններ կը յղուին դէմ, բայց գլխակոր վերադառնալու համար։

Գիշեր մի յանկարծ հրացանի պայթմունք կը լսուին Մարզուանի քաղաքին մէջ։ Հայ խմբակն էր որ Տավչան Տաղիէն եկած էր կառավարութիւնն զարհուրեցունելու։ Քաղաքն ոտքի կ'ելնէ «կառավարութեան պալատն կը կոխեն աղաղակելով։» Ցիրաւի պալատի պատուհաններն գնտակի հարուածներով ողջունելէ յետոյ՝ խմբակն կ'անցնի կ'երթայ նորէն դէպ իւր ապաստանարան։ և ահա ոստիկանք իրենց ծակերէն դուրս կելնեն։ և ձի հեծած կը սկսին վազել երբ վստահ էին թէ քաջերն բաւական հեռացած էին և անոնց հասնելու վտանգ չկար···

Ասոր վերայ բազում անմեղներ կը լեցունեն ի բանտ։ Խումբն լուր կը յղէ թէ ինք այս ինչ վայրն է, և կը հրաւիրէ որ անմեղներն թողլով իւր վերայ գան ոստիկանք։ Բայց աւելի դիւրին է անզէն և անմեղ անհատներ աստի անտի բռնել բանտ տանիլ քան երթալ 10 հոգիէ բաղկացեալ բայց մպառազէն խմբակի վերայ· ոստիկանք և զինուորական պաշտօնեայք գիտեն զայդ··· Ի հարկէ այսպիսի պատահմունք կառավարութեան տկարութիւնն կը պարզեն յաչս ժողովրդին և ապստամբական միտմանց ոյժ կուտան։

Մեծայարգ Տի· Մ· Զերազ իւր թերթի անգլիերէն հրատարակութիւնն գադրեցուցած է չորրորդ տարուոյնսկիզբէն, և միայն ֆրանսերէն պիտի հրատարակէ «ԼԱՌՄԷՆԻՆ», ամիսն մէկ անգամ։ Թերթին տարեկան բաժնեգինն է 3 տոլար 75 սենթ կամ 18ֆր· 75սանթիմ։ Հասցէնէ·
33 DE VERE GARDENS, LONDON, W.
ENGLAND

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ· Ս· Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սենթ կամ 50 սանթիմ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան։ բաղում ձևերով բացատրեալ· աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան· Տպարան Մ· Ս· Գաբրիէլեան, գին 50 սենթ կամ 2ու կէս ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ· Ս· Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէռ կամ 5 ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած· գրեաց Մ· Ս· Գաբրիէլեան։ Գին 20 սենթ կամ 1 ֆր·

Նիւթոց առատութիւնն ստիպեց զմեզ «Հայքի» ներկայ թիւն փոխա՝ 16ի ընել 20 երես։

«Հայք»ի Ա. թիւն մեր անցեալ տարուան այն բաժանորդներուն ևս կը յղեմք, որոց բաժնեգինն դեռ չէ հասած մեզ, մտածելով թէ հեռաւորութեան պատճառաւ ուշացած կը լինի նոցա հրամանն։

Ողբի ձայն մ՚ալ ճավայէ։

Մեր հեռաւոր գաղթականութեանց մէջ կ՚ապրին ու կը մեռնին ազնիւ հոգիներ, որոց մասին գրեթէ բնաւ չենք լսեր։

Մեզ ուղղեալ նամակէ մի կը տեղեկանամք թէ Տիկին Կատարինէ Թովմասեան, Սամարանգցի, այդ ազնիւ հոգիներու կարգէն, կնքած է իւր մահկանացուն ի 11 Յունիս 1892։

Միւթարական է տեսնել թէ աշխարհի այդ ծայրագոյն անկիւններն ալ Հայեր հայերէն խօսելու և գեղեցիկ գրելու կարող են։ Ողբացեալ Տիկնոջ առն, Մեծ. Խ. Ա. Թովմասի դրչէն են հետեւեալ տողերը՝ զորս կ՚առնումք նորա մէկ բարեկամի նամակէն.—

... Ի զուր զմայր խնդրէք, ս՚ղիք,
Ո՞հ գողացան զնա պիք։
Մարդն առեղծուած բազմատխուր՝
Հանդերձ ազնիւ ըղձիւք իւր՝
Գոյ ակամայ, երթայ բռնի,
Սիրէ, յուսայ, մեռանի։
... Գուպար և յոյս և երաշխեպ.
Ահա կենաց մարդոյ վեպ։
... Այլ զկամացն ամենարար
Ո՞վ առնուցու զհամար.
Ուր մարդն հէք ընկճի անզօր,
Ցայտնին շնորհք անդանօր.
Զօրութիւն իմ, էն բարբառի,
Ի տկարութեան կատարի։

*

* *

Սուլթանը վերջապէս ստորագրած է այն իրատէն որով թոյլ կուտայ Խրիմեան Հայրիկի փոխել իւր հպատակութիւն։

*

* *

Յափանց Եփմատայ կը գրեն.—

Այս կողմեր մտահոգութեան մեծագոյն առարկայն է այժմ հնոտախան որ զԿարին ու շրջակայքն վարակելէ յետոյ անցած է յԵրիզա։ Այդ քաղաքի մէջ օրն մինչև 20—30 մեռնողներ եղան հնտախտով, մեծ մասամբ զինուորներ։ Երիզա բաւական անմաքուր քաղաք մի լինելով իսկ՝ եթէ այդքան միայն զոհ կուտայ, պէտք է որ ցաւն առ այժմ շատ հզօր չհամարուի։

Երկրորդ խնդիրն որ մտքերն կը զբաղեցուցնէ, է ցորենի սղութիւնն որ արդէն զգալի աստիճանաւ կը նեղէ ժողովուրդն։ Առեւտուրն անհամ է։

*

* *

Հետեւեալ ցաւալի լուրն մեզ կը հաղորդէ հայրենակից մի, որ Խուլլուլէն իրեն ուղղեալ թղթակցութենէ մի քաղած է։

Խուլլու Խարբերդի բազմահայ գիւղերէն մին է, 365 տուն հայ բնակչաք։ Գիւղին մէջ կայ Մուսթաֆա անուն դաղան մի որ Քրդերու գործակցութեամբ հայու տներ կը բանայ գիշերներն։

Կարապետ Աղօեան գիշեր ատեն արտը կը ջրէ եղեր երբ զինեալ Քրդեր կուգան իւր վերայ. օգնութիւն կ՚աղաղակէ, ատի անտի մարդիկ օգնութեան կը վազեն։ Առաջին հասնողն կը լինի Յարութիւն Երևանեան, 57 տարեկան քաջ մի, որ դժբաղդաբար անզէն լինելով ինքն իսկ զոհ կ՚երթայ — Քրդեր կը սպաննեն զայն գնտակահար։ Ուրիշ մի քանիներ ալ վիրաւորելով՝ կը փախչին կ՚երթան բարբարոսներ։ Դեկտ. 5ին, այդ դէպքէն յետոյ, Մանուկ Աղա Իսօեանի տունը կը ծակեն գողերն, և, զարմանալի՛ բան, թէև արթուն՝ ձայն չեն հաներ տնեցիք՝ առ երկիւղի... Երբ գողերն իրենց գործ աւարտած կը մեկնին, յայնժամ օգնութիւն կ՚աղաղակեն խեղճերն, որոց սակայն ոչ ոք կը համարձակի օգնութեան հասնիլ...

*

* *

Մասաչուսէցի Ա.թթըլպօրոյէն կը գրեն մեզ թէ գիւղին մէջ «Խրիմեան» անուամբ ընկերութիւն մի կազմած են մեր պանդուխտներ։ Ցաւալի է որ «պէճ»ի կամ կուրծքի նշանի առթիւ վէճի տեղի տրուած է։

Քաղաքական

ԼՈՒՐԵՐ

Զօրավար Պոթիալմոնի քննութեանց արդիւնքը Թրքաց ցնորք ցրուած է Տարտանէլի և Պոսֆորի ամրութեանց մասին, զորս խլճալի կերպիւ անբաւական ցուցած է զմայրաքաղաքն պաշտպանելու։ Ամրութիւններն նորոգելու ձեռնարկուած չէ սակայն, գոնէ լրագրեր բան մի չեն ըսեր այդ մասին, և դիւրահասկանալի է որ Օսմանեան եռանդն պաղած լինի դրամի բացակայութեան պատճառաւ։ Հաշիւ կը լինէր թէ 150 միլիոնի պէտք կայ նըշանակուած նորոգումներն ընելու համար։ 100 միլիոնի փոխառութիւն մ'ընել փորձեցին և չյաջողեցան։

*

* *

Սեւ ծովուն վերայ Լազերն առաւել քան երբէք աղատօրէն կե'րթեւեկեն այժըմ իրենց մաքսախոյս ապրանքներն փոխադրելու համար։ Լազերն քաջազէն և յանդուգն են, և միլիոնաւոր լիրայի վընաս կը հասցուենն օսմանեան մաքսատան՝ փոխադրելով ահագին քանակութեամբ ծխախոտ և ուրիշ ապրանք Ռուսիայէ ի Թուրքիա և Թուրքիայէ ի Ռուսիա։

Բ Դուռն շուարած՝ անկարող կը գտնուի այս կազմակերպեալ աւազակութեան առջեւն առնլու։

*

* *

Պուլկարիա որ 15 տարի առաջ դեռ ազգ չէր, այսօր այնքան կարեւոր տարր դարձած է միջազգային քաղաքականութեան որ իւր թշնամիք և բարեկամք ըսիպուած են ի լուրջ հաշիւ առնուլ նորա զօրութիւնն։ Պուլկարիա կրնայ 150 հազար զօրք հանել և 50 հազար ալ յաւելուլ ատոր վերայ։ Այդ պատկառելի ոյժ մ'է, մանաւանդ որ պուլկարք լաւ քաջողեն և երկրին փոխադրական միջոցներն աւելի զարգացած են քան ի Թուրքիա։ Օսմանցիք անգամ կը պատկառին այժմ իրենց ճորտն համարուող այդ պետութենէ, որու համար կ'ըսեն թէ կրնայ ներկայ պայմանաց մէջ բանակ քալեցունել մինչև Կ. Պոլսոյ վերայ։ Օսմանցիք 15 հազար զօրք միայն ունին յԱնդրիանուպոլիս, և 20 հազար ի Կ. Պոլիս. պուլկարական զօրութեան առջև այդ պատրաստ օսմանեան ոյժերն անբաւական են, և նոր ոյժեր հասցունելու շարժումն ալ առ այժմ չեն կրնար պուլկարաց արագութեամբն կատարել և օսմանցիք։

*

* *

Օսմանեան պետութեան վիճակն հետզհետէ աւելի խղճալի կը դառնայ։ Ներսէն Լազք, Սրբք և Հայք կը խլրտին, կը գործեն։ Դրսէն, աստի Ռուսիա կը նեղէ, կը ոպառնայ, անտի՝ Անգլիա կը խըրատէ և կը յանդիմանէ կեղծ քաղցրութեամբ։ Պուլկարիա անգամ երկիւղալի հանդիսացած է։ Կ. Պոլիս լաւ պաշտպանուած կը կարծուէր ու չէ. և հարկ է ամրացունել զայն ցամաքէն ու ծովէն, Ռուսիոյ դեմ ու անգլիոյ դէմ միանգամիանգամայն, զի երկուքն ալ կը ցանկան առնուլ զԿ. Պոլիս։ Եւ տարակոյս չկայ թէ Մեծն Բրիտանիա պիտի փորձէ առնուլ զԿ. Պոլիս երբ տեսնէ թէ վտանգ կայ որ Ռուսիան առնու զայն։ Երկու տարի առաջ անգլիացի քաղաքագէտ միյոդուած մի հրատարակեց Հանդիսի մի մէջ, որով ջատագովեց Անգլիացւոյ համար զԿ Պոլիս գրաւելու հարկն ու հնարաւորութիւնն միանգամայն։

*

* *

Ամերիկայի կառավարութիւնն իւր նոր ներկայացուցիչն, զՏիար Թոմսըն, պատերազմակոն նաւով ի Պոլիս յղեց, բայց Բ. Դուռն չսիրեց զայդ։ Սուլթանի հրաւիրմամբ Տիար Թոմսըն Տարտանէլ պիտի թողու մարտանաւն և արքունի նաթով պիտի մտնէ յօսմանեան մայրաքաղաքն։

Դիտելի է թէ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն սկսած է այրապէս վարուիլ Դրան հետ, և իւր ոյժ ի հանդէս ածել յարմար առիթներով։

Հաւաստի աղբիւրէ գիտեմք թէ ջանքեր կը լինին կարեւոր մարմնոց կողմանէ մղելու Ամերիկայի կառավարութիւնն առաւել ևս չեշտելու իւր կրոնի քաղաքականութիւն հանդէպ Բ. Դրան, և տարա-

կոյս չունիմք թէ շատ ժամանակ չանցած Տաճկաստանի մէջ Ամերիկայի անունն և Ամերիկեան քաղաքացիութիւնն աւելի նը շանակութիւն պիտի ունենայ։

*

* *

Միացեալ Նահանգաց Ազգային ժողովն նորէն ձեռք առած է գաղթականութեանց շափ և սահման դնելու կնճռոտ խնդիրն։ Զանազան միջոցներ առաջարկուած են առ այս նպատակ։ Մէկ միջոցն այն է որ ամէն գաղթականէ պահանջուի իւր մայրենի լեզուն գիրաւ կարդալ գրելու կարողութիւն։ Մեք այս միայն կը նշանակեմք, զանց ընելով միւս շարս միջոցներն, զի կը կարծեմք թէ վերջապէս այս կամ ասոր մօտ միջոց մի կ'ընդունուի գաղթային հոսանքն չափաւորելու և լաւացնելու համար։ Ամերիկացւոց նպատակն չէ գաղթականութիւնն բոլորովին արգելուլ, այլ ցած, տգէտ, անճարակ, չքաւոր, ախտաւոր և մոլի մարդոց դէմ փակել երկրին դռներն։

*

* *

Միացեալ Նահանգաց կառավարութիւնն իրաւունք ունի օտար երկրաց ցած տարրներուն դէմ փակել երկրին դռներն որքան որ հնար է։ Միայն անցեալ տարի 150 չքաւորներ Նիւ Եորք Նահանգի գրթութեան հատատութիւններէն հանուելով ետ դրկուեցան իւրաքանչիւր իւր հայրենիքն, Եւրոպա։

Մի թէ Ամերիկա Եւրոպայի աղբանո՞ցն կամ հիւանդանո՞ցն է, կը հարցնեն Ամերիկացիք իրաւամբ։ Սոքա կ'ուզեն որ Ամերիկայ առնու իւր վերայ աղքատաց և տգիտաց բեռն, բայց ոչ թէ բոլոր աշխարհի բեռն։

Եւ ո՞րքան տգէտ և անպէտ մարդիկ կուգան օտար երկիրներէ, ուր նշանակութիւն, քուէ, ձայն չէին կրնար ունենալ, և հոս հազիւ հինգ տարի ապրելէ յետոյ, կը սկսին քուէ տալ և երկրին գործերուն խառնուիլ իբրեւ քաղաքացի, առանց սակայն պէտք եղած կրթութիւնն ունենալու։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ Եորք «Ուբրլսի» մէջ կը կարդամք հետեւեալ տխուր լուրն։

«Էլլիս Այլէնտի վերայ գործ ընելու թոյլտուութիւն ետ առնուեցաւ Սիմոն Սամուր Հայազգիէն, որ կամբաստանուէր թէ իւր հայրենակիցներէն միքանին խաբած էր Գաղթային Շէնքին մէջ ունեցած առանցնաշնորհութեանց միջոցով, Սամուր Վուսթրրի Հայոց ընկերութեան կողմէն նամակներ բերած էր ժամանակ առաջ, որով արտօնութիւն կ'ունենար նոյն ընկերութեան շահերուն հոգ տանիլ կղզւոյն վերայ։

Շաբաթ օրն Սամուր 12 Հայեր կղզիէն տարած էր՝ Վուսթրը ճամբելու համար, այլ պահած էր գայնս իւր խանութի մէջ և ծանր վճարումներ ընել տալէն յետոյ՝ փողոցը նետած էր բոլորն։ Անիրաւեալներէն ոմանք բողոքեցին, և Սամուր պաշտօնանկ եղաւ։»

*

* *

Վուսթրրէ կը գրէ մեզ Պ. Կ. Ա.

Խարբերդու Մօրենիկ գիւղէն Մկրտիչ պետրոսեանի, որ թելի գործարանն կ'աշխատի, մէկ ձեռքին երկու մատերն մեքենային տակ մնալով կտրեցան, այսինքն ճկոյթն ու ցուցամատն։ Երիտասարդը իբր 30ամեայ կտրիճ մ'է։

*

* *

«ՀԱՅԲԻ» ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԲ

Ա.ռ

Խումբ մի ուսանողներ որք հանգանակած են 10 թալէր. մի համալսարանական ուսանող 5 թ. Պատ. Զոփարեան 3 թ. Տիար Հայկ Զ. 5 թ. Տիար Բ. Առաքելեան (Պոսթրն) 2 թ.

Տիար Սանդիկ Զարդիկ նուիրեց մէկ օրինակ «Հայք» Լինի ԱՐՇԱԼՈՅՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ընկերութեան։

Տր. Մ. Տատրեան կը նուիրէ մէկ օրինակ «Հայք» ում խմբագրութիւնն արժան համարի։

*

* *

«Հայքի» մուտքն ազատ է ի Ռուսիա։

ՌՈՎԸՆԴԷԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Ռաֆայէլ Պատկանեանի. — Մահագոյժ Գրիգոր Արծրունւոյ. — Հայոց Հուրն. — Գամսոռ Քաթիպա. — Հրապաշտութեան մնացորդներ Հայաստանի մէջ. — Հայոց Շարժումնք վերջին տասնեակ տարիներում— Պատրիարք Աշրգեանի Քաղաքականութիւնը— Նամակ Վանէ. — Նամակ Հալէպէ. — Ամերիկայի Հայերն ի՞նչպէս կրնան հարստանալ. —Ազգային Լուրեր. — Քաղաքական Լուրեր— Տեղական Լուրեր։

A. A. McLAUGHLIN

137 MAIN ST.

WORCESTER, MASS.

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ և ամեն շաբաթ երեկոյ հայազգի վաճառող մ'ալ կը պահեմ վաճառատանս մէջ որ անգղիերէն խօսելու անվարժ Հայերու կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գըլխարկ, վերարկու, սոնազգեստ (փանթոլոն), գուլպա, շապիկ ևն. ևն. Մեր գին ամենուն համար մէկ է և չափաւոր է. եկէք եւ տեսէք։

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԻԷՆԻՔԻՍ ՍԷՅՎԻՆԳՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւնները կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը հարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբեր կէսէն հաշուելով։

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱՊԻՐՔ

(Հաստատեալ ի 1849)

56 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

«ՀԱՅԲ»

ԹՂԹԱԿԱՊՄ

Ա. տարի 1տոլար 50 սենթ կամ 7 ֆր. 50։

Բ. տարի 2տոլար կամ 10 ֆրանք

RECULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

Յակոբ Էքիզեան — 348 Fountain Street, Providence R. I. U. S. A.

Կարապետ Էքիզեան — 28 South Margin Street, Boston, Mass

ԷՐԻԱԶԵՆ ԵՂԲԸՐՔ

Յովհաննէս Էքիզեան — 57 CaManTo Hann, Constantinople, Turkey.

Գէորք Էքիզեան — Harpoot Turkey in Asia.

RONOFF & OLDSEN

FINE CUSTOM TAILORS
And Dealers in

GENT'S FURNISHINGS

ԴԵՐԶԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ

214 Main St.

WORCESTER MASS.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ